դիմեալ առ կին ոմն, տային պատիժ նմայ ըստ Օրինաց, այլ այժմ ինքնակալ իշխանութեամբ կաղանալով 'ի բարեգոյն յօրինացէ, այսքան զանազանութիւն եղև ընդ դէմ արդարութեան Օրինաց և ազատութեան անդորրութեանց մինչ յորովայն մօրն կայսեր պատառեցաւ 'ի հռօմ և ոչ ոք գտաւ դատախազ, ուրեմն այս անցքս միմիայն պատճառ լինի ձեզ հաւանեցուցանելոյ որ ոչ մեզ և ոչ 'ի վերայ աշխարհին մերոյ մի՛ լիցի և մի՛ երևեսցի ոչ ոք, ով ոք որ իցէ այր ինքնակալ և ինքնակամ 'ի արարս իւր որ ոչ պատժեսցի ըստ Օրինօք, և Օրէնք մեր եղիցին տէր և թագաւոր մեր, բայց 'ի Օրինաց մերոց այլ ոչ ոք մի՛ ծանիցուք գերիվեր բայց Արարիչ Աստուածն միայն, և ոչ տացուք փոխ և ընկալցուք հատուցում ոչ յաւելի և ոչ պակաս քան զայն որ Օրէնս մեր հրամայէ 'ի վերայ մեր այն որ մեք ընտրեցինք, այնու որ մեք 'ի վերայ գործոց ձեռաց մերոց մեք վճռեցաք՝ մի՛ ոք ծիծաղեսցի 'ի վերայ պատուոյ և պատժոյ մերոյ թէ ինքն հասոյց 'ի վերայ մեր չար և կամ բարի, քաւ մի՛ լիցի ազատ մնասցուք 'ի շնորհաց և նախատանաց ամենեցուն և զոր ինչ արժան 'ի գործոց ձեռաց մերոց այն դատանիցուք վարձ ըստ Օրինօք, որ մեք վասն մեր արժանի արարաք, և մեք կատարեսցուք 'ի վերայ մեր 'ի ձեռանէ սպասաւորէ մերմէ հրամանաւ մերով Օրինաց, և